Կոնդակ օրհնութեան Սոֆիա և Յակոբ Էքիզլեր մօր և որդւոյ անունով՝ Ս. Էջմիածնի Գ. Հոգևոր ճեմարանի օգտին երկու հազար ռուբլի նուիրաբերելու համար։ 27 յուլիսի, թ. 1290։

Կոնդակ օրհնութեան եղբ. Արզումանեանների անունով՝ Ս. Էջմիածնի Գ. Հոգևոր ճեմարանի օգտին հինգ հազար ռուբլի նուիրաբերելու համար։ 27 յուլիսի, թ. 1291։

Նորին Սրբութեան մակագրութիւն Մ. Աթոռի գանձապահ Տ. Վրթանէս Ծ. վարդապետի յուլիսի 27-ի յայտարարութեան վրայ. պատուիրում ենք Սինօդին ընտրել հրաժարուող Տ. Վրթանէս Ծ. վարդապետի փոխարէն նոր գանձապահ, ստանալ նախորդից բոլոր դրամական հաշիւները և միւս բոլոր դրամական ամեն տեսակի փաստաթղթեր և այլ թղթեր, միով բանիւ ստանալ նորանից, իբրև գանձապահից, ամեն ինչ, որ գտնուում է նորա մօտ և կանոնաւոր եղանակով յանձնել նոր գանձապահին»։ 31 յուլիսի, թ. 1314։

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊՍՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Կոնդակ Նոր-Ջուղայի Վարդան քահանայ Տէր-Վարդանեանի անունով, որով քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց։ 16 յուլիսի, թ. 1227։

Կոնդակ Գանձակի ս. Լուսաւորիչ եկեղեցու միաբան Տ. Յուսիկ քահանայ Վերդիանի անունով, որով «կամիլաւկայ» գլխարկ կրելու իրաւունք շնորհուեց։ 23 յուլիսի, թ. 1258։